Իսկ Երբայեցիք որք էին 'ի Պաղեստին և 'ի Միջագետս՝ ապստամբեալ 'ի կայսերէ Յունաց, բազմութեամբ դիմեցին առ որդիսն Իսմայէլի, և միաբանեալ ընդ նոսա կազմեցին գունդ ստուար և դիմեցին յերկիրն Պաղեստինոյ, և յանկարծօրէն անկեալ 'ի վերայ զօրացն Յունաց 'ի սահմանս Արաբիոյ, արարին զնոսա փախստական, և պատգամաւորս առաքեցին առ Կայսրն եւ ասեն, շատ լիցի քեզ ունիլ զերկիրդ մեր, զի Աստուած հօր մերում Աբրահամու և որդւոց նորա խոստացաւ զայն, 'ի բաց թող խաղաղութեամբ, և մեք մի մոցուք յերկիր քո։ Եւ Կայսրն ոչ առ յանձն, իմ է ասէ երկիրն, և քոյ վիճակ ժառանգութեան անապատն. և ժողովեալ զօրս իբրեւ 70,000 արանց առաքեաց ընդդէմ Իսմայէլեան գնդին, պատուէր տուեալ սպասել մնացեալ զօրուն, զոր հուպ ընդ հուպ ժողովեալ արձակել ունէր զկնի նոցա։ Իսկ նոքա հասին 'ի Պաղեստին՝ անցեալ ընդ Յորդանան գետ խոնջ և վաստակ պատահեցան յաւազուտ անապատի անդ Իսմայէլեան բանակին, և 'ի դիմի հարեալ 'ի պարտութիւն մատնեցան, և բազումք 'ի մեծամեծաց անկան 'ի սրոյ Իսմայէլեան զօրուն և մնացեալքն եղեն փախստական։ Մեռաւ Մեհեմմէտ և թաղեցաւ 'ի Մեքինէ եւ անմիջական յաջորդ եկաց նմին Ապու–Պէքիր–Սատրդ կոչեցեալ. ١١ (632). և 'ի սմին ամի առին զԲոստրա քաղաք։ Եւ կացեալ 'ի Խալիֆայութեան սմա 2 և ամիսս 3 վախճանի, և կալաւ զաթոռն Օմար–Իպն–Խաթթապ. (١٣–634). եւ կոչեցաւ Ամիր–էլ–Միւմին, այսինքն Իշխան հաւատացելոց։ Իսկ և իսկ գրեաց 'ի բանակն և ընկէց յիշխանութենէ զզօրագլուխն Խալիտ–Իպն–էլ–Վալիտ եւ կացոյց 'ի տեղի նորա Ապու–Օպիտայ Իպն–էլ–Ճէրահ, որք էին յայնժամ 'ի կողմանս Միջագետաց։ Ի հասանիլ թղթոյն առ զօրավարն նոր, յորդան տուեալ զօրաց իւրոց եկեալ պաշարեաց զԴիամասկոս չորիւք զօրավարօք 'ի չորից կողմանց զաւուրս 70 եւ նեղեալ քրիստոնէից գրեցին գիր պայմանի եւ ետուն նոցա զքաղաքն. զայս գիր յետոյ առաքեցին առ Օմար, որ ունէր օրինակ զայս. «Ի պաշարելն ձեր զքաղաքն խնդրեցաք ազատութիւն որդւոց, ընչից, աղգի, և ժողովրդոց մերոց, եւ եղաք դաշինս